ՃԱՆԱՊԱՐՀ

Թովմաս Առաքելյան

ՃԱՆԱՊԱՐՀ

Մտերմիկ զրույցներ Հայոց եկեղեցու մասին

ԵՐԵՎԱՆ
2024

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՏԴ 271.72
ԳՄԴ 86.373.2
Ա 706

Առաքելյան Թովմաս
Ա 706 ՃԱՆԱՊԱՐՀ: Մտերմիկ զրույցներ Հայոց եկեղեցու մասին /
Թ. Առաքելյան.- Եր.: Newmag, 2024.- 352 էջ:

Այս գիրքը փոքրիկ ճամփորդությունների միջոցով պատմում է Հայ առաքելական եկեղեցու մասին: Գրքի հերոսը հենց դու ես, սիրելի՛ ընթերցող: Հեղինակն ուղեկցում է քեզ, բացատրում, թե ինչն ինչոց է Հայոց եկեղեցում՝ Խորհուրդներ, ծիսակարգ, բարեպաշտական սովորություններ, անդրադառնում է եկեղեցում վայելուչ կեցվածք ունենալու կարևորությանը, հերքում թյուրընկալումներն ու սնահավատությունները: Զուգահեռ հնչում են նաև եկեղեցական հայրերի, վարդապետների, հոգևորականների խոսքերը, որոնք անբաժան են մեր հոգևոր կյանքից: Այստեղ ամփոփված տեղեկությունները կարևոր են, քանի որ առօրյա կյանքում, անկասկած, առնչվելու ես քրիստոնեական այս Խորհուրդներին, ավանդություններին, սովորություններին: Լավ կլինի, որ գիտակցես, թե դրանք որտեղից են եկել, ուր են գնում և ուր կարող են մեզ տանել. չէ՞ որ քրիստոնեությունն ինքնին ճանապարհ է, որը տանում է դեպի փրկություն: Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 271.72
ԳՄԴ 86.373.2

Սուրբ Արքար Նախավկա հրատարակչություն
ՀԻՍԵԳՐԱՄ

ԱՄՐՈՑ

ISBN 978-9939-967-22-6
Թովմաս Առաքելյան «Ճանապարհ» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Զեզ էլ նույնից... 7
Նախաբան 11
Ինչո՞ւ է այս գիրքը կոչվում «Ճանապարհ» 15

Ճամփորդություն առաջին 25
Ապաշխարություն 27
Մկրտություն 31
Ինչ է Եկեղեցին 37
Մեր դավանանքը 52
Միասնական աղոթքի մասին 58
Հոգևորականներին չդատելու մասին 62
Կանայք՝ գլխաշորով 65
Վայելուչ կեցվածք եկեղեցում 73
Հոգևորականին ողջունելու կարգը 80
Հոգևորականի օրհնությունը 84

Ճամփորդություն երկրորդ 93
Շարականների երգեցողություն 94
Անդաստան 107
Մատաղ 120
Հոգեհանգիստ 128
Քրիստոնեական պատկերագրության մասին 137

Ճամփորդություն երրորդ 163
Ուխտագնացություն 167
Խաչ և խաչակնքում 176
Երկրպագություն 190
Սբ Գրիգոր Տաթևացի. աղոթքի մասին 196
Մոմավառություն 211
Խնկարկություն 219
Տնօրհնեք 227

Ճամփորդություն չորրորդ 231
Հայոց եկեղեցու տոները 234
Սբ Ծնունդ և Ամանոր 238
Տյառնընդառաջ 252
Մտորումներ Սբ Հարության տոնի մասին 254
Վարդանանց տոնը 261
Սրբերի մասին 263
Պահքի մասին 277
Քրիստոնեական բարոյագիտություն 281
Վերադարձ 298

Հաղորդություն. հոգևոր պատվաստանյութ 303
Իբրև սկիզբ, արի՛ պատկերացնենք... 303
Հինկտակարանյան զոհաբերություններ 306
Նոր Ուխտ. Քրիստոսի զոհաբերությունը 313
Հաղորդության Խորհուրդը վաղ Եկեղեցում 319
Հաղորդության Խորհուրդը Հայոց եկեղեցում 325

Վերջաբանի փոխարեն. Հովհաննես Շիրազ 331
Հ. Գ. Ծանոթանա՞նք 335
Օգտագործված գրականության ցանկ 339

ՁԵԶ ԷԼ ՆՈՒՅՆԻՑ...

Մեր սեղանին Թովմաս ուրարակիր Առաքելյանի ճանապարհի «Ճանապարհն» է: Ինչո՞ւ եմ գրում ճանապարհի «Ճանապարհը»: Այն մի հետաքրքիր ճամփորդության մասին է, որն արտահայտում է երիտասարդ արձանագրողի թե՛ ներաշխարհը, թե՛ մտաշխարհը, թե՛ Հայրենաշխարհը և այս բոլորը հանգուցող միակ ու բացարձակ Քրիստոսի Ճանապարհը, որը մեր Թովմաս-Թոմիկը դարձրել է իր սեփական կյանքի ճանապարհը:

Այն կարելի է կոչել նաև ուխտավորի ճանապարհ: Որքան էլ այն անձնական ընկալումների արտացոլանք է, այնքան և ավելի անանձնական ձգտումի ինքնարտահայտություն է, որը գեղեցկորեն շարահարված է մտերմիկ զրույցով, առակներով և ասույթներով, կորստի ցավով և հոգևոր տենչով, չափազանց արժեքավոր աղբյուրագիտական և գիտական հենքով: Այսպիսով, ընթերցողին կամ, ավելի ճիշտ, ճամփորդին մտերմացնում, հարազատացնում է խորախորհուրդ աստվածային ճշմարտությունների հետ, որոնք մեր այսօրվա աշխարհում թվացյալ վախեր և հեռավորություն են ծնում մարդկանց մտքերում:

Հետաքրքիր է ընթանալ, ճամփորդել «Ճանապարհի» ճանապարհներով, որը սովորական, հոգնեցուցիչ «զբաղմունք» չէ, այլ անընդհատ մղում է ավելի ընթանալ, ավելի ներգրավվել՝ քեզ դարձնելով և՛ զրուցավար, և՛ զրուցակից, անընդհատ

սպասելով նոր բացահայտումների, հարցադրումների և լուծումների, որոնք մեր կյանքի համապարփակ ուրվագիծ-նկարագիրն են: Այն հանգրվան առ հանգրվան մեզ հարազատացնում, սեփական է դարձնում մեր հոգևոր, դավանական, աստվածաբանական, խորհրդաբանական, եկեղեցագիտական, տոնագիտական, բարոյագիտական կյանքին և մտածողությանը, Եկեղեցում ներմշակութայնացած ժողովրդական բարեպաշտական սովորություններին, որոնք ամփոփվում են մեկ նպատակով և Ճանապարհով՝ մարդու աստվածայնանալու կամ, ավելի ստույգ, մարդու մարդանալու մասին պատմելով:

Գյումրիում ծնված, Արցախ աշխարհում հասակ առած, Սուրբ Էջմիածնում սնված Թովմաս ուրարակրին ճանաչում եմ իր ուսանողական տարիներից՝ իր յուրահատուկ, անխառն հոգևոր նկարագրով, պրպտուն մտքով, տևապես սովորելու և այն նորովի վերարժևորելու ձգտումով, հավատարմությամբ և սիրով իր սնուցող Ծնողի՝ Սուրբ Եկեղեցու, համբուրելի Մոր՝ Մայր Հայրենիքի և շնորհաբաշխ Հոր՝ Տեր Հիսուս Քրիստոսի՝ Կյանքի Ճանապարհի հանդեպ: Մեր ճանաչողությունն ավելի խորացավ Հայոց Բանակում իր նվիրական ծառայությամբ՝ պատերազմին մասնակցությամբ և Տավուշ աշխարհում իր անմնացորդ առաքելության ժամանակ: Նա այսօր ժամանակակից աշխարհի բոլոր հնարավոր միջոցներով դարձել է շատերի՝ մեծի ու փոքրի տան սպասված «ճամփորդը», հյուրը, սիրելին ու հարազատը: Մեկ խոսքով՝ «Ճանապարհը» սոսկ գրություն չէ, այլ իր իսկ նկարագիրը՝ նույնացած և մեզ էլ նույնացրած: Այն մի ամբողջական ՍԵՐ է, որը ճառագում է ճամփորդության ընթացքում:

Օրինվե՛ս, տղա՛ս, առատաբար օրինվե՛ս, անդավաճան և աննահանջ ընթանաս դեպի նոր հանգրվաններ: Կյանքիդ ճանապարհը Կյանքի Ճանապարհի հետ նույնացած ու քաղցրացած մնա, ոլորաններն ուղիղ դառնան, խոչընդոտները՝ ցատկահարթակներ՝ նույն և ավելի սիրով ու նվիրումով:

Քեզ էլ, սիրելի՛ զրուցակից-ընթերցող, անձանձրույթ ճամփորդություն եմ մաղթում: Այն թող հայելու արտացոլանքն ունենա քեզ համար: Տե՛ս ու ճանաչի՛ր ինքդ քեզ, մի՛ վախեցիր ընթանալ այս «Ճանապարհի» ճանապարհով: Սա քո՛ ճանապարհն է, որի ուղեկիցը և վերջնահանգրվանը դու ես, մեր ընդհանրական նկարագիրը և մեր Տեր Աստված:

Ես էլ ճամփորդակից դարձա և այս ճանապարհին՝ գրքի էջերում հանդիպած, շփոթված փոքրիկի անմեղ արտահայտությամբ եմ դիմում ձեզ: Նա չգիտեր, թե ինչ արձագանքեր «Քրիստոս Յարեա՛ւ» ողջույնին, և պատասխանեց՝ բացառիկ աստվածային ճշմարտություն հաղորդելով. «Ձեզ էլ նույնից»:

Մաղթում եմ՝ «ձեզ էլ նույնից»...

Սիրով և աղոթքով՝
Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան
Առաջնորդ Տավուշի թեմի

Ճանապարհի բարի Քրիստոս և ճշմարտութիւն.
առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յերկինս։

Սբ Ներսես Շնորհալի
Երգ Արևագալի

Նախաբան

Բարև:

Մենք առավոտյան դուրս ենք եկել տնից ու գնում ենք դեպի տուն՝ դեպի եկեղեցի: Գնում ենք ոչ թե Քրիստոսի տուն-թանգարան, այլ մեր տուն, որտեղ մեզ սպասում է Հայրը՝ հայրերին հատուկ սիրով, քնքշությամբ, երբեմն էլ նախատող, թե՝ մեծացել եք, ուշ-ուշ եք գալիս ինձ այցելության: Մենք էլ «ուրախանում ենք, երբ ասում են՝ Տիրոջ տուն ենք գնալու» (հմմտ. Սաղմ. 121:1):

Դու ինձ ասացիր, որ հավատում ես Աստծուն*: Բայց իմացիր, որ կա հավատի դրսևորման չորս կերպ կամ, պատկերավոր ասած, չորս աստիճան: Առաջինը դիվական հավատն է. ես հավատում եմ, որ Աստված կա, բայց գիտակցաբար և առանց զղջալու գործում եմ Աստծո կամքին հակառակ: Այս մասին Հակոբոս առաքյալը շատ դիպուկ է նկատում. «Դու հավատում ես, որ մեկ է Աստված. լավ ես անում: Դևերն էլ են հավատում և դողում» (Հակ. 2:19): Երկրորդը կոչվում է ստրկական հավատ. այստեղ մարդիկ հավատում են Աստծո գոյությանը զուտ նրա համար, որ չպատժվեն ու դժոխք չըգնան: Թեև Պատարագին չեն մասնակցում, Աստվածաշունչ չեն կարդում և չունեն քրիստոնեական կենցաղ, բայց առիթը բաց չեն թողնում ասելու, որ «Աստված իրենց մեջ է»: Երրորդ

* Հուսով եմ՝ այդպես է, սիրելի՛ ընթերցող...: (Ծանոթագրությունները՝ հեղինակի):

փուլն արդեն ծառայական հավատն է, երբ հավատում ենք Աստծուն, որպեսզի պարգևներ ստանանք և գնանք դրախտ: Սակայն այս դեպքում էլ մարդիկ փորձում են ամբողջապես կատարել սուրբգրային ու եկեղեցական բոլոր կանոնները՝ երբեմն նույնիսկ առանց հասկանալու և խորանալու: Հրաշալի է Աստծուց հավիտենական պարգևներ ստանալու ակնկալիքը, բայց այս կետում առանձնանում են նրանք, ովքեր շատ են սիրում դատել իրենց շրջապատող «անհավատ ու չար» մարդկանց. զգո՛ւյշ լինենք: Եվ, վերջապես, չորրորդ ու ամենաբարձր աստիճանը որդիական հավատն է, երբ դու հավատում ու սիրում ես Աստծուն առանց ակնկալիքների, պարզապես ընդունելով Նրան որպես հայր՝ խնամող, խրատող ու սիրող: Սուրբ Գիրքը չես կարդում միայն այն պատճառով, որ այդպես է պետք, այլ քեզ իրապես հետաքրքիր է, քաղցր են Աստծո խոսքերը քեզ համար (Սաղմ. 118:103) և ճրագի նման լուսավորում են քո ընթացքը (Սաղմ. 118:105), եկեղեցի գնալն էլ հայրական տանը լինելու ուրախ առիթ է, ոչ թե տխուր պարտականություն:

Եվ ուրեմն ճանապարհ ենք ընկել, որպեսզի, հայոց աշխարհի տարբեր անկյուններ այցելելով, հարստանանք գիտելիքներով ու հոգևոր փորձառությամբ, մշտապես փորձենք հարատևել որդիական հավատի մեջ, մի խոսքով՝ գիտակից քրիստոնյա լինենք: Սա ճամփորդություն է դեպի բարձունք, որը պետք է հաղթահարել: Եթե պատրաստ ես, շարժվենք: Եվ քանի որ ես շատախոս եմ, ընթացքում կպատմեմ քրիստոնեական մեր եկեղեցու մասին: Համ էլ ճանապարհին չենք ձանձրանա...

Ի դեպ, ձանձրույթը քրիստոնյայի ամենավտանգավոր թշնամիներից է: Եկեղեցում կարող ենք ձանձրանալ, եթե

գիտելիքներով զինված չլինենք: Հենց ձանձրույթն է պատճառներից մեկը, որ աղոթքի ժամանակ սկսում ենք հաճախակի հորանջել: Այս վտանգի դեմ պայքարելու ամենաարդյունավետ միջոցը գիտելիքն է: Երբ սկսենք հասկանալ, թե ինչ հզոր ու հետաքրքիր իրականության մաս ենք կազմում եկեղեցում, ոչ միայն չենք ձանձրանա, այլև մեծ հետաքրքրությամբ ու սիրով կմասնակցենք բոլոր արարողություններին, ինչքան էլ դրանք երկար ու բարդ թվան: Նախքան ճանապարհ ընկնելը եկ աղոթենք:

Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան: Տէ՛ր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց, գնալ յարդարութեան ճանապարհս եւ ի կեանս յաւիտենից. ամէն*:

* Աշխարհաբար. «Տեր, ուղղիր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով: Տեր, ուղղիր և առաջնորդիր մեր հոգիները և բոլոր հավատացյալներին գնալ արդարության ճանապարհով դեպի հավիտենական կյանք. ամեն»:

Ինչո՞ւ է այս գիրքը կոչվում «Ճանապարհ»

«Քրիստոնյա» բառն առաջին անգամ օգտագործել են անտիոքացիները (հմմտ. Գործք 11:26)։ Քրիստոսի հետևորդների համար սա վեհագույն կոչում էր։ Հայերենում կա այս բառի մի հրաշալի բացատրություն. քրիստոնյա - Քրիստոս ի նա, այսինքն՝ Քրիստոս նրա մեջ է։ Քրիստոս չի բնակվի մեղքի, կրքերի և գայթակղության գաղջ ապաստարանում։ Քրիստոսով, Քրիստոսի մեջ ապրելով է, որ մարդն արժանանում է այս վեհ կոչումը կրելու պատվին՝ քրիստոնյա, Քրիստոսակիր։ Շատ հետաքրքիր է նաև Խոսրով Անձևացու բնորոշումը*։ Անձևացին մեզ կոչում է ոչ թե պարզապես քրիստոնյաներ, այլ ասում է՝ մենք Քրիստոսյաններ ենք**։ Երանի՜ նրանց, ովքեր կարժանանան այս վեհ կոչումներին՝ դառնալ քրիստոնյա և մնալ Քրիստոսյան։

Սակայն «քրիստոնյա» և «քրիստոնեություն» եզրերը սկսել են լայնորեն կիրառվել միայն Բ դարի սկզբում։ Իսկ ի՞նչ էր մեր կրոնի առաջին անվանումը, ինչպե՞ս էին առաքյալների օրոք

---

* Խոսրով Անձևացին սբ Գրիգոր Նարեկացու հայրն է։

** Խոսրով եպիսկոպոս Անձևացի, Սուրբ և հոգեկիր, Աստծո կամքը և երկյուղը ճշմարտությամբ ծանուցողի հույժ հոգեշահ, պիտանի և խրատական գործերը և կենսագրությունը, աշխատասիրությամբ Բագրատ եպս Գալստանյանի, Երևան, 2022, էջ 224։ Անձևացին հիմնվում է Պողոս առաքյալի՝ Գաղատացիներին ուղղված նամակի 5:24 տողի վրա։

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark